



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՀՈՒՆՎՈՒՄԻ Ա. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՑ**  
**ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ,**  
**ՍԱՐԿԱԼԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ**  
**ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՄՈՍՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ**

**Ա. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ**

Ա. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մեծ ընտանիքին համար տօնական օր մը եղաւ Կիրակի, 18 Նոյեմբեր 2007-ն, հանդիսաւոր նշումովը Եկեղեցւոյ հիմնադրութեան 30-ամեակին եւ Սարկաւագական ձեռնադրութեան կատարումով:

Եպիսկոպոսական հանդիսաւոր Ա. եւ անմահ Պատարագը մատուցեց Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, իրեն առընթերակայ եւ Ա. Սեղանին սպասարկող ունենալով Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի գոյգ վարիչներ՝ Գերայ. Տ. Սիւռն Ճ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Արդարեւ, «Չի Ողորմած եւ մարդասեր եւ Աստուած» աղօթքին յաջորդած «Ուրախ լեր, Ա. Եկեղեցի» շարականի երգեցողութեամբ սկսաւ ձեռնադրութեան հոգեպարար արարողութիւնը: Սարկաւագական ձեռնադրութեան եւ կարգին արժանացան Եկեղեցւոյ մէջ հասակ առած ու երկար տարիներ ծառայութիւն մատուցած չորս ուրարակիրներ. Սեդրակ Յովհաննէսեան, Շանթ Մանճրլիքեան, Սուրէն Հագարեան եւ Մանուկ Ջուլեան: Ձեռնադրութեան ընթացքին խարտաւիլակութիւն կատարեց եւ ձեռնադրեալը Սրբազան Հօր ներկայացուց Եկեղեցւոյս հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Քիւլիմեան: Յուզիչ էր պահը, երբ չորս նուիրեալները ծնկաչոք բարձրացան Ա. Խորան, Առաջնորդ Սրբազանը Ա. Խաչով եւ իր աչով օրհնեց զանոնք եւ խնդրեց ներկաներէն, որ բոլորը միասին աղօթեն անոնց արժանաւորման եւ սարկաւագական կարգի ստացման համար: Ապա դէպի արեւմուտք դառնալով, ափերը բացած՝ անոնք հրաժարեցան աշխարհիկ մտահոգութիւններէ եւ հաճոյքներէ, մինչ Սրբազանն ու հոգեւորականաց դասը կ'երգէին «Աստուածային եւ երկնաւոր շնորհք» շարականը: Աղօթքին կը մասնակցէր նաեւ Եկեղեցւոյս առաջին հոգեւոր հովիւ Արժ. Տ. Նարեկ Ա. Քիւլիմեան: Շրիքեան: Այս առիթով, առ ի գնահատանք Եկեղեցւոյ իր բերած ծառայութեան, Սրբազանը ուրար կրելու իրաւունք շնորհեց բարեկրօն Յովիկ Գապարչուզեանին:

Իր պատգամ քարոզին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը նախ փառք եւ գոհութիւն յայտնեց Աստուծոյ, եւ օրհնեց յիշատակը բոլոր այն

երախտաւորներուն, որոնք 30 տարիներ առաջ տեսիլքը եւ իմաստութիւնը ունեցած էին հիմնելու Ս. Կարապետ Մայր եկեղեցին՝ ի մատակարարումն եւ ի գոհացումն գաղութիս հոգեւոր կեանքին: Ապա, Սրբազան Զայրը իր խնդակցութիւնը յայտնեց, նոր ձեռնադրեալ սարկաւազներուն յորդորելով ապրելու մաքրակրօն կեանք մը, անսակարկ նուիրումով ծառայելու Ս. Կարապետ եկեղեցւոյ պայծառութեան եւ Տիրոջ փառքին համար, կոչ ուղղելով ե՛լ սարկաւազներուն ե՛լ հաւատացեալ բազմութեան՝ լիցքաւորուելու եւ ապրելու քրիստոնեական առաքիւնութիւններով՝ հաւատքով, յոյսով եւ սիրով:

Ապա Սրբազանը աղօթք բարձրացնելով առ Աստուած, ըսաւ. «Ամենակալ Տէր, նոր ձեռնադրեալ սարկաւազները եւ բոլոր հաւատացեալները հաստատ ու անխախտ պահէ իրենց հաւատքին մէջ, որպէսզի, Զու Որդիիդ եւ մեր Փրկչին՝ Յիսուս Զրիստոսի կենարար ու քաւչարար Արիւնովը մաքրուած եւ Ս. Զոգիիդ շնորհքներովը լուսազարդուած ապրին անարատութեամբ, մաքուր խղճմտանքով եւ առաքիւնի կենցաղով, իրենց անձերուն մէջէն փառաւորելու համար Թեզ, ո՛վ ամենասուրբ Երրորդութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն»:»

### **ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ**

Ս. Պատարագէն ետք, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր եւ կազմակերպութեամբ Եկեղեցւոյ Զովիւին ու Զոգաբարձութեան, «Կարապետեան» սրահէն ներս տեղի ունեցաւ ճաշկերոյթ-մոմավառութիւն: Ձեռնարկին ներկայ էին Կրօնական Ժողովի եւ Ազգային Վարչութեանց անդամներ, Եկեղեցւոյ Զոգաբարձութեան, Երսփոխանական կազմի, Տիկնաց Միութեան անդամներ, Օծման կնքահայր՝ Տէր եւ Տիկին Վահէ Կարապետեան, Եկեղեցւոյս բարերարուհի՝ Տիկին Ֆլորա Շահվերտեան, Զ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ՝ Տիար Գարօ Խանճեան, Զ.Յ.Դ. Գարգին Նժդեհ Կոմիտեութեան ներկայացուցիչներ, Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Վարժարանի Տնօրէն՝ Դոկտ. Վիգէն Եագուպեան եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներ, Զ.Օ.Ս.ի Մայր Մասնաճիւղի, Զ.Ս.Ը.Ս.ի Լոս Անճելըսի Մայր Մասնաճիւղի, Ռումանահայոց Ռաֆֆի Մշակութեային Միութեան, Տարօն-Տուրութեանի Զայրենակցական Միութեան, Զալէպի Ազգային Սահակեան Վարժարանի Շրջանաւարտից Միութեան ներկայացուցիչներ, Եկեղեցւոյս Դպրաց դասի եւ Երիտասարդաց Ս. Գրոց խմբակի անդամներ, եւ հաւատասեր ժողովուրդի զաւակներ, թիւով աւելի քան 300 հոգի:

Օրուան հանդիսավարուհի՝ Տիկին Զուրիկ Ապտուլեան, հրաւիրեց բոլորը յոտնկայս ունկնդրելու Ամերիկեան եւ Զայկական հիմներգները, դաշնակի վրայ նուագակցութեամբ՝ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի: Առաջնորդ Սրբազան Զօր սեղաններու օրհնութենէն ետք՝ յայտագիրը բացուած յայտարարուեցաւ: Գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր: Յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Սուրէն Սրկ

Հագարեան, դաշնակի ընկերակցութեամբ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի, Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Վարժարանի աշակերտները: Բարի գալստեան խօսք արտասանեց Ս. Կարապետ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան Ատենապետ՝ Տոքթ. Միսաք Պարսամեան, իր խօսքին մէջ շեշտելով յատկապէս Եկեղեցւոյ ունեցած կարեւոր դերին՝ ապագայ սերունդներու հոգեւոր եւ բարոյական դաստիարակութեան գործընթացին մէջ:

Ապա տեղի ունեցաւ մոմավառութիւն: Առաջին մոմը վառեց Առաջնորդ Սրբազան Հայրը, երկրորդը՝ Եկեղեցւոյ Օծման Կնքահայրը, ապա 53 մոմավառներ մոմ վառեցին, այն խորունկ համոզումով, որ Տիրոջ Տան շինութեան եւ պայծառութեան համար վառած այդ մոմերը նոր լուսաւորութիւն պիտի տան նաեւ իրենց հոգիներուն եւ ընտանիքներուն:

Ս. Կարապետ Մայր Եկեղեցին գեղեցիկ աւանդութիւն է ստեղծած, որ ձեռնարկի ընթացքին պատուեն Եկեղեցական կամ աշխարհական նուիրեալ ծառաներ, որոնց վաստակը մեծ է եղած ընդհանրապէս գաղութիս եւ յատկապէս Եկեղեցւոյս ծառայութեան մէջ: Այս տարուան համար Հոգաբարձութիւնը գեղեցիկ մտածումը ունեցած է պատուելու Եկեղեցւոյս Հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վիգէն Ա. Քհնյ. Վասիլեան, իր քահանայագործման 25 եւ Հոլիվուտի Եկեղեցւոյ մէջ ծառայութեան 9 ամեակներուն առթիւ: Այս առիթով, Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը Տէր Հօր նուիրեց գեղեցկահիւս լանջախաչ մը, Տիկնանց Միութիւնը՝ կրծքի վրայ անցուելիք խաչ մը, իսկ Երիտասարդաց Ս. Գրոց Խմբակը՝ ձեռաց խաչ մը:

Տէր Հայրը, շնորհակալական խօսքին մէջ, իր խորունկ շնորհակալութիւնը յայտնեց նախ Առաջնորդ Սրբազան Հօր, Հոգաբարձութեան, Տիկնանց Միութեան եւ յարակից գործող բոլոր մարմիններուն, մենախօսելով՝ թէ ինք գիտակ է, որ տրուած նուէր խաչերը զինք սիրով եւ գոհողութեան ոգիով կը լեցնեն, Խաչի խորհուրդին ընդմէջէն անսակարկ ծառայելու համար Խաչեալին եւ Անոր կողմէ իրեն յանձնուած հօտին:

Ապա Տէր Հայրը ներկայացուց շինարարական աշխատանքներու ծրագիրը, Եկեղեցւոյ նոր մարմարաշէն խորանի եւ Դասի մարմարապատում եւ այլ ծրագիրներ, որոնց «Առաջին մուրճի հարուածը պիտի զարնուի վաղը առաւօտ», յայտնեց ան: Այս առիթով ներկայացուց Տէր եւ Տիկին Յակոբ եւ Հայկուհի Դաղլեան նուիրեալ ամուլը, որ սիրայօժար ստանձնած է շինարարական բոլոր ծախսերը, Եկեղեցւոյս նուիրելով 75.000 տոլար:

Օրհնութեան խօսքը արտասանեց եւ փակման աղօթքը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ան նախ շնորհաւորեց Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մեծ Ընտանիքը, իր 30-ամեակին առիթով, Տէր Հայրը՝ քահանայական օծման եւ ձեռնադրութեան 25 ամեակին առիթով, Եկեղեցւոյ բարերարուհին, Օծման կնքահայրը եւ Դաղլեան ընտանիքը՝ անոնց կատարած նուիրական բարերարութեանց համար: Սրբազանը նաեւ բարձրօրէն գնահատեց 30-ամեակի ձեռնարկի գործադիր յանձնախումբի անդամները՝ Հոգեւոր Հովիւր, Ատենապետ՝ Տոքթ. Միսաք Պարսամեան, Տիար Չոհրապ Եարալեան, Տիկիններ Հուրիկ Ապտիլեան,

Գարմեն Եարալեան, Մատլեն Աշճեան, Նորա Թաշճեան եւ Ծովիկ Չէյթլեան:

Սրբազան Զօր Պահպանիչով եւ «Կիլիկիա» մաղթերգի հաւաքական կատարումով վերջ գտաւ օրուան հոգեգուարթ ձեռնարկը, եւ ներկաներ, անմոռաց յուշերով՝ վերադարձան իրենց տուները: Այսպիսով՝ ոսկեայ էջ մըն ալ արձանագրուեցաւ Ս. Կարապետ Եկեղեցւոյ ոսկեմատենին մէջ:

Պ.Վ.Կ.

### **30<sup>TH</sup> ANNIVERSARY OF ST. GARABED CHURCH CELEBRATED WITH ORDINATION OF DEACONS AND BANQUET**

On Sunday, November 18<sup>th</sup>, the 30<sup>th</sup> anniversary of St. Garabed Church in Hollywood was celebrated with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who also conducted the ordination of deacons. Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, along with parish pastor Archpriest Rev. Vicken Vassilian, assisted the Prelate at the altar. Archpriest Rev. Nareg Shrikian, the first pastor of the church, also participated in the Liturgy.

During Liturgy four stole-bearers were ordained deacons by the Prelate; they were Setrag Hovannessian, Shant Manjelian, Suren Hazarian, and Manuk Chulyan. As the newly ordained deacons ascended the altar on their knees, the Prelate blessed them and asked the congregation to join in the prayers. On this joyous occasion, the Prelate also granted Hovig Kabakchouzian the privilege of bearing a stole.

The Prelate began his sermon by thanking the Lord and blessing the memory of all those who thirty years ago had the vision to establish St. Garabed Church for the spiritual nourishment of the community. The Prelate then congratulated the deacons, advised them to live a virtuous life and to serve the church and our Lord devotedly, and called on them and the parishioners to live according to the Christian virtues of faith, hope, and love. The Prelate concluded his sermon by praying to the Lord to keep the newly ordained deacons and all the faithful strong in their faith so that they may live righteously and glorify His name.

Following services a banquet and candle-lighting ceremony took place at "Karapetian" Hall with the participation of Religious and Executive Council members, Board of Trustees, delegates, Ladies Auxiliary, Godfather Mr. and Mrs. Vahe Karapetian, church benefactress Mrs. Flora Shahverdian, A.R.F. Central Committee member Mr. Karekin Khanjian, A.R.F. Karekin Njtech representatives, Rose and Alex Pilibos Principal Dr. Viken Yacoubian, representatives of A.R.S. Mayr Chapter, Homenetmen Los Angeles Chapter, Raffi Cultural Association, Daron-Dourouperan Compatriotic Union, Sahagian Shool of Aleppo, choir and youth group and Bible Study members, and over three hundred faithful.

The official program began with the invocation by the Prelate. Welcoming remarks were delivered by Board of Trustees Chair Dr. Misak Barsamian, following which the candle-lighting ceremony took place. During the banquet, in keeping with tradition, the Board of Trustees honored a devoted servant of the church. This year, Rev. Vicken Vassilian was honored on his 25th anniversary of ordination, and as pastor of St. Garabed Church for the past nine years. Rev. Vassilian thanked the Prelate, Board of Trustees, and Ladies Auxiliary then presented the remodeling plans of the church and thanked Mr. and Mrs. Hagop and Haigouhi Taghlian for taking on the cost of the renovation.

In his closing remarks the Prelate congratulated the church members on their 30<sup>th</sup> anniversary, the pastor for his 25 years of priesthood, the church's benefactress, Godfather, and the Taghlian family for their benevolence, as well as the banquet organizing committee. The banquet concluded with the Prelate's benediction and "Giligia".